ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2024 թվականի № 496-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 4-ի № ԴԽ/15.2/39333-2024 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

1) ***Միհր Եղիազարյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ,

2) ***Ռուզան Մարտիրոսյան*** - աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ,

3) ***Մարինե Ստեփանյան*** - աշխատանքային խմբի ղեկավարի տեղակալ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի Կոտայքի մարզային վարչության պետ *(համաձայնությամբ)*,

4) ***Արմենուհի Հարությունյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի Կոտայքի մարզային վարչության ավագ մասնագետ *(համաձայնությամբ)*,

5) ***Էմիրա Աֆյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի Կոտայքի մարզային վարչության ավագ մասնագետ *(համաձայնությամբ)*,

6) ***Սաթենիկ Հովհաննիսյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի Կոտայքի մարզային վարչության ավագ մասնագետ *(համաձայնությամբ)*,

7) ***Արամայիս Գալստյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի համաճարակաբան *(համաձայնությամբ)*,

8) ***Լիլիթ Ենոքյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կոտայքի մարզի Հրազդանի տարածաշրջանի համաճարակաբան *(համաձայնությամբ)*,

9) ***Խաչատուր Մելիքյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Կոտայքի մարզի Նաիրիի տարածաշրջանի համաճարակաբան *(համաձայնությամբ)*:

2 . Առաջարկել՝

1) համայնքների ղեկավարներին՝ տեղերում ստեղծել հանձնաժողովներ և անձնական պատասխանատվությամբ ապահովել գյուղատնտեսական կենդանիների հաշվառումը և հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի Կոտայքի մարզային վարչության համապատասխան բաժին սահմանված ժամկետում ներկայացումը,

2) Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի Կոտայքի մարզային վարչությանը՝ համայնքներին ապահովել անասնագլխաքանակի հաշվառման համար անհրաժեշտ քանակի հաշվետվության ձևերով, տրամադրել համապատասխան մեթոդական ցուցումներ և ամփոփ տվյալները սահմանված ժամկետում ներկայացնել վերադաս կազմակերպություններին:

3. Հանձնաժողովի անդամ է համարվում նաև տվյալ համայնքի ղեկավարը *(տվյալ բնակավայրի վարչական ղեկավարը)*, *(համաձայնությամբ)*:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Վասակ Վարդանյանի* վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՄԱՀԱԿՅԱՆ**

2024 թվականի դեկտեմբերի 10
ք. Հրազդան